

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝ ք. Արմավիր



Տարածքը	1254 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	70049 հա
այդ թվում՝ վարելահողեր	39399 հա
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	94
Գյուղական բնակավայրեր	95
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	277.3 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	98.6 հազ.մարդ
գյուղական	178.7 հազ. մարդ

ՀՀ Արմավիրի մարզը զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի 4.2%-ը: Մարզի բնակչությունը 2003թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8.6 %-ը: Մարզի բնակչության 55.2 %-ը բնակվել է գյուղական վայրերում:

ՀՀ Արմավիրի մարզն իր մեջ ընդգրկում է Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի տարածաշրջանները՝ Վաղարշապատ, Արմավիր, Մեծամոր քաղաքներով և 95 գյուղական բնակավայրերով:

Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղին՝ Երևան - Արմավիր - Քարակերտ - Գյումրի: Մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին՝ Երևան - Թբիլիսի:

Մարզը հարուստ է պատմամշակութային արժեքներով՝ Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Զվարթնոց տաճարը, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այդրիճը, հին հեթանոսական կենտրոն Բագարանը, «Մուսալեռ» և «Մարդարապատ» հուշահամալիրները, Սբ. Էջմիածնի Մայր Տաճարն իր Գանձատնով:

Պատմական Հայաստանի մայրաքաղաքներ Արմավիրի ու Երվանդաշատի փլատակներն առնված են ՀՀ Պատմական միջավայրի պահպանության գոտիների մեջ:

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայա-

կան պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Անասնապահության բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ հողագործության մեջ՝ պտղաբուծությունն ու բուսաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկա-ընդեղենային մշակաբույսեր: Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

2003թ. ՀՀ Արմավիրի մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 4.9%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 14.3%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 1.8 % և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 2.7%:

Մարզում 2003թ. գործել են 43 արդյունաբերական, 6 շինարարական, 14 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 2 ձկնորսության ու ձկնաբուծության, 6 տրանսպորտային, 87 ծառայություններ մատուցող և 425 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 88-ը խանութներ են, 322-ը՝ կրպակներ, 10-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 2-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի, 3-ը՝ սպառողական ապրանքների շուկաներ: Բեռնաուղևորափոխադրումների զգալի մասն իրականացվել է ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզում 2003թ. գործել են նաև 122 պետական և 1 ոչ պետական հանրակրթական և 6 մարզական դպրոցներ, 79 նախադպրոցական հիմնարկ, 4 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական և 3 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 110 գրադարան, 2 թանգարան, 1 հյուրանոց, 59 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 6 հիվանդանոց, մշակութալուսավորչական մարզային նշանակության կենտրոններ և 10 երաժշտական, արվեստի, գեղարվեստի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ և այլն:

Արմավիրի տարածաշրջան

Վարելահողեր	16310 հա
Քաղաքային համայնքներ	2
Գյուղական համայնքներ	37
Գյուղական բնակավայրեր	37
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	118.6 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	42.2 հազ. մարդ
գյուղական	76.4 հազ. մարդ

2003թ. տարածաշրջանում գործել են 18 արդյունաբերական, 9 գյուղատնտեսական, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 1 շինարարական, 3 տրանսպորտային, 39 ծառայություններ մատուցող, 69 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 30-ը խանութներ են, 32-ը՝ կրպակներ, 5-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ սպառողական ապրանքների և 1 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 52 հանրակրթական, 4 արվեստի և 3 մարզական դպրոցներ, 45 նախադպրոցական հիմնարկ, 2 բարձրագույն ուսումնական

հաստատություն, 1 թանգարան, 45 գրադարան, 26 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց, 4 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, 1 հյուրանոց:

Նախկին Արմավիր մայրաքաղաքի (ժամանակի զարգացած մշակութային կենտրոններից մեկը) միջնաբերդը, ըստ պեղումների, գտնվել է մոտ 80 մ բարձրությամբ բլրի գագաթին: Քաղաքի կենտրոնում եղել է Հայկ Աղեղնավորի հրապարակը, որտեղ Հայոց արքա Երվանդ Սակավակյացն իր ձեռքով թագադրել է իր որդի Տիգրան Մեծին:

Կյանքը քաղաքում մ.թ. I դարում աստիճանաբար սկսում է մարել և արդեն IV դարում այն նմանվում է լքված ամրոցի: Արմավիր քաղաքն ամբողջությամբ ավերվել է մոնղոլների արշավանքի ժամանակ: Նախկին մայրաքաղաք Արմավիրի տարածքում ներկայումս գտնվում են մարզի Նոր-Արմավիր, Ջանֆիդա, Հայկավան, Սովետական, Ջրաշեն, Նոր Արտագերս, Նալբանդյան և Արմավիր գյուղերը: Միջնաբերդի ավերակները, որպես ուխտատեղի, պահպանվում են մինչ օրս:

Արմավիր քաղաքը (նախկին՝ Հոկտեմբերյան) կրում է Հայոց առաջին մայրաքաղաքի անունը: Այն հիմնադրվել է 1931թ. հունիսի 26-ին և գտնվում է Երևան քաղաքից 46 կմ դեպի հյուսիս-արևմուտք: **Արգիշտիխինի բերդը**, որի շրջակայքում հետագայում կառուցվել է Արմավիր քաղաքը, հիմնադրվել է Արգիշտի I-ի կողմից՝ մ.թ.ա.776թ. (Էրեբունու հիմնադրումից 6 տարի անց): Գտնվել է արգավանդ և բարեբեր Արարատյան դաշտում, միջազգային քարավանային առևտրական ուղիների խաչմերուկում: Ժամանակի ընթացքում քաղաքը դառնում է Ուրարտական պետության վարչատնտեսական կարևոր բերդաքաղաքներից մեկը, մրցակցելով Վան մայրաքաղաքի հետ:

Արմավիր քաղաքի (մարզկենտրոն՝ 1997թ.-ից) բնակչությունը 2003թ. կազմել է 32.2 հազ. մարդ: 2003թ. քաղաքում գործել են 12 արդյունաբերական, 3 տրանսպորտային կազմակերպություններ, 12 հանրակրթական և 3 մարզական դպրոցներ, 12 նախադպրոցական հիմնարկ, 1 բարձրագույն, 4 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 2 գրադարան և 1 հիվանդանոց:

Մեծամոր քաղաքի (բնակչության թվաքանակը 2003թ. կազմել է 10.0 հազ.մարդ) տարածքը բնակեցված է եղել մ.թ.ա. V հազարամյակից մինչև մ.թ. XVIII դարը: 1965թ.-ին սկսվել են Մեծամոր ամրոցի դամբարանադաշտի պեղումները: Արքունի քաղաքը նշանավոր էր իր աստղադիտարանով, 7 սրբարաններից կազմված տաճարական համալիրով:

2003թ. քաղաքում գործել են 2 արդյունաբերական, 1 շինարարական, 2 հանրակրթական, 3 նախադպրոցական հիմնարկ, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն, 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

Էջմիածնի տարածաշրջան

Վարելահողեր	12473 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	42
Գյուղական բնակավայրեր	43
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	139.0 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	56.4 հազ. մարդ
գյուղական	82.6 հազ. մարդ

Տարածաշրջանում 2003թ. գործել են 21 արդյունաբերական, 5 գյուղատնտեսական, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 5 շինարարական, 2 տրանսպորտային, 41 ծառայություններ մատուցող, 343 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 50-ը խանութներ են, 285-ը՝ կրպակներ, 5-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 2-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

Տարածաշրջանում գործել են նաև 55 հանրակրթական, 5 արվեստի և 3 մարզական դպրոցներ, 26 նախադպրոցական հիմնարկ, 50 գրադարան, 1 թանգարան, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն, 26 ամբուլա-տոր-պոլիկլինիկական հիմնարկ, 2 հիվանդանոց:

Վաղարշապատ քաղաքի տարածքում մարդիկ բնակվել են հնագույն ժամանակներից՝ վկաները էջմիածնի և մոտակայքի հուշարձաններն են, քարե, բրոնզե և երկաթե դարերի հնագիտական անընդմեջ շերտերով: Վաղարշապատի մասին ամենահին տեղեկությունը պատկանում է Ուրարտական թագավոր Ռուսա Բ-ին (մ.թ.ա. 685-645թթ.):

Ըստ պահպանված սեպագրերի, Վաղարշապատի տարածքը կոչվել է Կուարլինի: Մեկ դար հետո, Հայոց Երվանդ Սակավակյաց թագավորի օրոք, վերջինիս փեսա Վարդգես Մանուկն այդ նույն տարածքում՝ Շրեշ բլրի և Արտիմեդ քաղաքի մոտ Քասախ գետի ափամերձ տարածքում կառուցել է խոշոր ավան և իր անունով կոչել Վարդգեսավան:

Վաղարշ Ա. Արշակունի արքան Վարդգեսավանը պարսպապատել ու վերանվանել է Վաղարշապատ և դարձրել մայրաքաղաք: Մինչև Հայ Արշակունյաց թագավորության անկումը՝ 428թ., Վաղարշապատը կատարել է մայրաքաղաքին փոխարինող աթոռանիստի դեր և որի դերը հատկապես արժեվորվել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո:

Վաղարշապատ քաղաքը գտնվում է Երևանից 16 կմ հեռավորության վրա: 2003թ. բնակչության թվաքանակը կազմել է 56.4 հազ. մարդ: Այն մարզում մեծությամբ և նշանակությամբ առաջին քաղաքն է:

2003թ. քաղաքում գործել են 18 արդյունաբերական, 3 շինարարական, 2 տրանսպորտային կազմակերպություններ, 14 հանրակրթական, 1 արվեստի և 1 մարզական դպրոցներ, 10 նախադպրոցական հիմնարկ, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն, 9 գրադարան և 1 թանգարան:

Բաղրամյանի տարածաշրջան

Վարելահողեր	10616 հա
Քաղաքային համայնքներ	-
Գյուղական համայնքներ	15
Գյուղական բնակավայրեր	15
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	19.7 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	-
գյուղական	19.7 հազ. մարդ

Բաղրամյանի տարածաշրջանը կազմավորվել է 1983թ.-ին: Տարածքը կազմում է 45300 հա: Տարածաշրջանը նախկինում մասնագիտացած էր հիմնականում

արդյունաբերության մեջ: Գործում էին համակցված կերերի, թեթև լցանյութերի, քարհանքի արդյունահանման, երկաթբետոնյա իրերի միջին ու մանր արդյունաբերական կազմակերպություններ, խոզաբուծական համալիրներ, որոնց կողմից արտադրվում էր հանրապետության խոզի մսի արտադրության 45%-ը:

Տարածաշրջանում 2003թ. գործել են 4 արդյունաբերական, 1 տրանսպորտային, 7 ծառայություններ մատուցող, 13 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 8-ը խանութներ են, 5-ը՝ կրպակներ: Գործել են 16 հանրակրթական և 1 արվեստի դպրոցներ, 8 նախադպրոցական հիմնարկ, 15 գրադարան, 7 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց:

Մարզկենտրոնից 36 կմ դեպի արևմուտք՝ Երասխա և Ախուրյան գետերի միախառնման տեղում, գտնվում է Հայաստանի հնագույն մայրաքաղաքներից մեկի՝ *Երվանդաշատի*, Երվանդունիների թագավորության վերջին մայրաքաղաքի ավերակները: Հին Հայաստանի այս մայրաքաղաքը կործանվել է 360թ.-ին: Առ այսօր պահպանվում են Երվանդաշատի պարիսպների հետքերը, երկու եկեղեցիների ավերակները և վիմագիր արձանագրությունները: Քաղաքի տեղում այժմ գտնվում է Երվանդաշատ գյուղը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Արմավիր	ք. Արմավիր
Վաղարշապատ	ք. Վաղարշապատ
Սեծամոր	ք. Սեծամոր

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ակնալիճ	Ակնալիճ
Ակնաշեն	Ակնաշեն
Աղավնատուն	Աղավնատուն
Ամասիա	Ամասիա
Ամբերդ	Ամբերդ
Այգեկ	Այգեկ
Այգեշատ (Արմավիրի տարածաշրջան)	Այգեշատ
Այգեշատ (Էջմիածնի տարածաշրջան)	Այգեշատ
Ապագա	Ապագա
Առատաշեն	Առատաշեն
Արագած	Արագած
Արագափ	Արագափ
Արաքս (Արմավիրի տարածաշրջան)	Արաքս
Արաքս (Էջմիածնի տարածաշրջան)	Արաքս
Արգավանդ	Արգավանդ
Արգինա	Արգինա
Արմավիր	Արմավիր
Արշալույս	Արշալույս
Արտամետ	Արտամետ
Արտաշար	Արտաշար
Արտիմետ	Արտիմետ
Արևադաշտ	Արևադաշտ
Արևաշատ	Արևաշատ
Արևիկ	Արևիկ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Բագարան	Բագարան
Բաղրամյան (Բաղրամյանի տարածաշրջան)	Բաղրամյան
Բաղրամյան (Էջմիածնի տարածաշրջան)	Բաղրամյան
Բամբակաշատ	Բամբակաշատ
Բերքաշատ	Բերքաշատ
Գայ	Գայ
Գետաշեն	Գետաշեն
Գրիբոյեդով	Գրիբոյեդով
Դալարիկ	Դալարիկ
Դաշտ	Դաշտ
Դոդս	Դոդս
Եղեգնուտ	Եղեգնուտ
Երասխահուն	Երասխահուն
Երվանդաշատ	Երվանդաշատ
Զարթոնք	Զարթոնք
Ժդանով	Ժդանով
Լենուդի	Լենուդի
Լեռնագոգ	Լեռնագոգ
Լեռնամերձ	Լեռնամերձ
Լուկաշին	Լուկաշին
Լուսագյուղ	Լուսագյուղ
Խանջյան	Խանջյան
Խորոնք	Խորոնք
Ծաղկալանջ	Ծաղկալանջ
Ծաղկունք	Ծաղկունք
Ծիածան	Ծիածան
Կողբավան	Կողբավան
Հայթաղ	Հայթաղ
Հայկաշեն	Հայկաշեն
Հայկավան	Հայկավան
Հացիկ	Հացիկ
Հոկտեմբեր	Հոկտեմբեր
Հովտամեջ	Հովտամեջ
Հուշակերտ	Հուշակերտ
Ձերժինսկի	Ձերժինսկի
Մարգարա	Մարգարա
Մեծամոր	Մեծամոր
Մերձավան	Մերձավան
Մյասնիկյան	Մյասնիկյան
Մրգաշատ	Մրգաշատ
Մրգաստան	Մրգաստան
Մուսալեռ	Մուսալեռ
Նալբանդյան	Նալբանդյան
Նոր Արմավիր	Նոր Արմավիր
Նոր Արտազես	Նոր Արտազես
Նորակերտ	Նորակերտ
Նորապատ	Նորապատ
Նորավան	Նորավան
Նոր Կեսարիա	Նոր Կեսարիա
Շահումյան	Շահումյան
Շահումյանի թռչնաֆաբրիկա	Շահումյանի թռչնաֆաբրիկա

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Շենավան	Շենավան
Շենիկ	Շենիկ
Ոսկեհատ	Ոսկեհատ
Պտղունք	Պտղունք
Ջանֆիդա	Ջանֆիդա
Ջրաշեն	Ջրաշեն
Ջրառատ	Ջրառատ
Ջրառատի թռչնաֆաբրիկա	Ջրառատի թռչնաֆաբրիկա
Սամաղար	Սամաղար
Սովետական	Սովետական
Վանանդ	Վանանդ
Վարդանաշեն	Վարդանաշեն
Տալվորիկ	Տալվորիկ
Տանձուտ	Տանձուտ
Տարոնիկ	Տարոնիկ
Փարաքար	Փարաքար
	Թաիրով
Փշատավան	Փշատավան
Քարակերտ	Քարակերտ
Ֆերիկ	Ֆերիկ



Սուրբ Հռիփսիմեի տաճարը Վաղարշապատ քաղաքում

**ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ
ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, <i>մարդ</i>	10 000	5106	4894
Ծնվածներ	109	56	53
Մահացածներ	75	38	37
Ամուսնություններ	48	X	X
Ամուսնալուծություններ	3	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, <i>քառ.մ</i>	24.1	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, <i>մարդ</i> ՝			
նախադպրոցական	111	57	54
հանրակրթական	1732	884	848
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	53	27	26
միջին մասնագիտական	80	41	39
բարձրագույն մասնագիտական	32	16	16
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (<i>հաճախումների քանակը</i>)	16
Մարզիկներ, <i>մարդ</i>	62	32	30
Զբաղվածներ, <i>մարդ</i>	4097
նրանցից՝ գիտական հիմնարկներում	6	3	3
նրանցից՝ գիտության դոկտոր	1	1	0
գիտության թեկնածուներ	3	2	1
ուսուցիչներ	150	77	73
բժիշկներ	15
կրտսեր բուժանձնակազմ	41
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), <i>մարդ</i>	205	105	100
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, <i>մարդ</i>	1483
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	251	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	39091
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	1331
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	32	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, <i>մարդ</i>	32
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	19	X	X



Զվարթնոց տաճարի ավերակները



Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի տաճարը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐՁԵՐԸ ԹՎԵՐՈՎ, 1999-2003